ՀՀ ոստիկանության
կրթահամալիրի պետի 2016
թվականի ---------- «------»
N ----------Ա հրամանի

ԿԱՐԳ

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

1. ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտամեթոդական ամսագիրը (այսուհետ՝ ամսագիր) հրատարակվում է նվազագույնը տարին երկու անգամ՝ առնվազն 100 տպաքանակով:
2. Ամսագիրը հրատարակումը երաշխավորվում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական խորհրդի կողմից:
3. Ամսագիրը ՀՀ ոստիկանության կրթահամալիրի համացանցային կայքում ունի առանձին բաժին:
4. Ամսագրի նյութերի հավաքման, հրատարակչության նախապատրաստման, հրատարակման, առաքման և ամսագրի համացանցային կայքի պարբերաբար թարմացման աշխատանքներն իրականացվում են ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական աշխատանքների բաժնի կողմից (ամսագրի խմբագրություն):
5. Ամսագրի հրատարակման աշխատանքների ընդհանուր վերահսկողությունն իրականացվում է գլխավոր խմբագրի կողմից:
6. Հրատարակման ենթակա նյութերը ընդունվում են բուհերի ամբիոնների, գիտահետազոտական հիմնարկների երաշխավորության, կամ համապատասխան ոլորտի մասնագետի կարծիքի առկայության դեպքում:
7. Նյութերն ընդունվում են էլեկտրոնային կարգով՝ առձեռն կամ ամսագրի էլեկտրոնային հասցեին ուղարկելով:
8. Նյութին կից ներկայացվում են հոդվածի վերնագիրը, համառոտագիրը, հեղինակի տվյալները և բանալի բառեր՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն:
9. Նյութերի ծավալը որոշելիս հիմք են ընդունվում հետևյալ պահանջները՝ տեքստը տպագրվում է սովորական A4 չափի թղթի վրա՝ 1.5 տողաչափով, հիմնական տեքստի տառերի չափը՝ 12, տողատակերի տառերի չափը՝ 10, լուսացքները՝ ձախից, վերևից, աջից և ներքևից՝ 2 սմ, Unicode տառատեսակով՝ «Arial Unicode»:
10. ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ասպիրանտների, սովորողների, ոստիկանության ծառայողների, կրթահամալիրի հետ

համագործակցության պայմանագիր ունեցող արտասահմանյան երկրների ոստիկանական ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների և ամսագրի խմբագրական խորհրդի անդամների կողմից հեղինակած նյութերը հրատարակվում են անվճար: Գլխավոր խմբագրի որոշմամբ կարող է անվճար հրատարակվել նաև այլ հեղինակների աշխատություններ:

11. Այլ ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների կողմից ներկայացվող նյութերը հրատարակվում են վճարովի՝ մինչև 5 էջի սահմաններում՝ 5000 դրամ, 5-10 էջի սահմաններում՝ 10000 դրամ:
12. Ամսագրի հրատարակչությունից և իրացումից ստացված գումարը վճարվում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի հաշվեհամարին:
13. Յուրաքանչյուր հրատարակությունից հետո ամսագրում ընդգրկված նյութերի հեղինակներին անվճար տրվում է ամսագրի 2 օրինակ: **(13-րդ կետը փոփոխվել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի 2017 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ 467-Ա հրամանով):**
14. Ներկայացված նյութերը սույն կարգով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չեն ընդունվում:
15. Յուրաքանչյուր հրատարակումից հետո ամսագրի մեկական օրինակ առաքվում է Հայաստանի ազգային գրապալատ, Հայաստանի ազգային գրադարան, մասնագիտական գրադարաններ: Ըստ անհրաժեշտության կարող է առաքվել նաև այլ հասցեատերերի:
16. Յուրաքանչյուր հրատարակումից հետո ամսագրի տվյալ համարը արտացոլվում է ամսագրի համացանցային կայքում:
17. Ամսագիրը ունի խմբագրական խորհուրդ, որի նիստը գումարվում է առնվազն տարին մեկ անգամ:
18. Գլխավոր խմբագրի որոշմամբ կարող են հրավիրվել խմբագրական խորհրդի արտահերթ նիստեր:
19. Խմբագրական խորհրդի նիստի նախապատրաստական աշխատանքները իրականացվում են ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական աշխատանքների բաժնի կողմից:
20. Գլխավոր խմբագրի տեղակալը, տարին առնվազն մեկ անգամ խմբագրական խորհրդի քննարկմանն է ներկայացնում ամսագրի կատարված աշխատանքների հաշվետվությունը:
21. Խմբագրական խորհրդի նիստը վարում է գլխավոր խմբագիրը, նիստը արձանագրում է խմբագրական խորհրդի պատասխանատու քարտուղարը, յուրաքանյուր նիստի վերջում կազմվում է խմբագրական խորհրդի նիստի արձանագրություն:

22. Խորհուրդը քննարկում է ամսագրի վերաբերյալ հաշվետվությունը, կարող է հանդես գալ սույն կարգի փոփոխության նախաձեռնությամբ, ինչպես նաև ամսագրի հրատարակման աշխատանքների իրականացման հետ կապված և այլ առաջարկություններով:
23. Խորհրդի որոշումները ընդունվում են քվեարկությամբ, հաստատվում են ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում գլխավոր խմբագրի ձայնը որոշիչ է:
24. Գլխավոր խմբագրի նախաձեռնությամբ խմբագրական խորհրդի նիստին կարող են հրավիրվել նյութերի հեղինակներ, մասնագետներ, պաշտոնատար անձինք: